

հ.100122

30-01-2021թ.

Նախընտրած ծանուցման ձևը՝

Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *Լոռու մարզպետարան*

Դիմող՝ «ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ

Հասցե՝ ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ Փ., 1/3,
4-րդ հարկ,

foi@foi.am : +37491407836

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ.

Հարգելի գործընկերներ,
Հաշվի առնելով Էլեկտրոնային հասցեի հետ կապված խնդիրները՝ «Տեղեկատվության ազատությունը կառավարման համակարգում» խորագրով աշխատաժողովի մասնակցության հրավերն ու օրակարգը Ձեզ ենք փոխանցում e-request հարթակի միջոցով (փաստաթղթերը՝ կից):

Հրավերը ստանալու դեպքում, խնդրում ենք հաստատել պատասխան նամակով:
Շնորհակալ ենք համագործակցության համար:

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար:

Կից՝ 2 ֆայլ

Դիմող՝

ՇՈՒԾԱՆ ԴՈՅԴՈՅԱՆ

30.01.2021

ՀՀ Լոռու մարզպետ Արամ Խաչատրյանին

Հարգելի պարոն Խաչատրյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը նախատեսում է կազմակերպել առցանց աշխատաժողով **«Տեղեկատվության ազատությունը կառավարման համակարգում»** խորագրով: Այն նախատեսված է պետական կառավարման 57 մարմինների տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի ստորաբաժանումների աշխատակիցների համար: Միջոցառումն իրականացվում է **«Աջակցություն Հայաստանին նախաձեռնություն»** ծրագրի շրջանակում, որն իրականացվում է «Մենեջմենթ Սիսթեմզ Ինթերնեշնլ» (ՄՄԻ) կազմակերպության կողմից ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ:

Աշխատաժողովը տեղի կունենա **2021թ. փետրվարի 18-19-ին** առցանց՝ Ձուև հարթակի միջոցով: Կից ներկայացնում ենք միջոցառման օրակարգի նախագիծը:

Խնդրում ենք մինչև **2021թ. փետրվարի 5-ը** պատասխան գրությամբ տրամադրել համապատասխան ստորաբաժանման **երկու աշխատակցի տվյալներ** (անուն/ազգանուն, պաշտոն, հեռախոսահամար և էլ. հասցե), ովքեր Ձեր կառույցի կողմից կմասնակցեն **«Տեղեկատվության ազատությունը կառավարման համակարգում»** թեմատիկ աշխատաժողովին:

Աշխատաժողովի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել Շուշան Դոյդոյանին 091407836 հեռախոսահամարի կամ sh.doydoyan@icloud.com էլեկտրոնային հասցեի միջոցով:

Կանխավ շնորհակալ ենք համագործակցության համար:

Հարգանքով՝
Շուշան Դոյդոյան



Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)

ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ.՝ (+37410) 560360 +37491407836,
Էլ. հասցե՝ foi@foi.am Գայք՝ www.foi.am

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ

ՕՐԱԿԱՐԳ

Մասնակիցներ՝ Պետական կառավարման մարմինների հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության ստորաբաժանումների աշխատակիցներ, տեղեկատվության ազատության պատասխանատուներ, մամուլի խոսնակներ:

Փետրվարի 18, 2021թ.

Օր 1-ին

15:00-15:10	Ողջույնի խոսք ՀՀ Կառավարության ներկայացուցիչ
15:10-15:20	Միջոցառման նպատակը և խնդիրները, մասնակիցների ակնկալիքները, ուսումնասիրության արդյունքների ներկայացում
15:20-15:40	Տեղեկատվության ազատություն հասկացությունը, տեղեկատվության ազատության առավելությունները պետական կառավարման մարմինների համար՝ ինչու է այն անհրաժեշտ: Քննարկում
15:40-16:30	Տեղեկատվություն ստանալու իրավունքը Ովքեր ունեն տեղեկություն ստանալու իրավունք: Ինչպիսի տեղեկություններ ստանալու համար են սովորաբար դիմում և ինչպես, տեղեկություն ստանալու բանավոր, գրավոր, էլեկտրոնային հարցումներ: Տեղեկություն ստանալու միասնական հարթակ: Քննարկում
16:30-17:30	Տեղեկատվության տրամադրման սուբյեկտները Աշխատանք տեղեկություն ստանալու հարցումների հետ: Ում պարտականությունն է տեղեկատվության տրամադրումը: Տեղեկություն տրամադրելու կարգը, մեխանիզմները (առկա եւ առցանց) և ժամկետները: Քննարկում

Փետրվարի 19, 2021թ.

Օր 2-րդ

10:00-11:00	Տեղեկատվության ազատության սահմանափակումները Տեղեկատվության տրամադրման մերժման օրենսդրական հիմքերը, տեղեկատվության տրամադրումը մերժելու կարգը և ժամկետները: Քննարկում
11:00-11:30	Պրոակտիվ հրապարակայնություն. տեղեկության հրապարակումը սեփական նախաձեռնությամբ Պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները, հրապարակման ժամկետները, ձեւաչափը: Պրոակտիվ հրապարակայնության ապահովման արդյունավետ միջոցները՝ պաշտոնական կայքեր, սոցիալական ցանցեր, ՁԼՄ-ներ և այլն: Քննարկում
11:30-12:30	Բողոքարկում եւ տեղեկություն ստանալու իրավունքի խախտման համար պատասխանատվությունը Տեղեկատվության ազատության խախտումները, խախտումների բողոքարկման կարգը: Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության պահանջները: Քրեական օրենսգրքով նախատեսված օրենսդրական պահանջները: Ռազմավարական դատավարական գործեր: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը տեղեկատվության ազատության ոլորտում: Քննարկում